

Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ա.ԿԱԴ. 2. ՄԱՆԱՆԻՅԱՆ

ՆՈՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԱՍԻՆ*

- 39) Եպարբոս, եպարբի.— «Յտուն պատե-
րազմ ընդ Բուփոսի եպարբոսի» Խոր.,
Բ 60, էջ 189. ունեն նաև Ոսկ. Յովհ., Ա
37, Վարք հրց., ԺԴ. «Կոչէ զնա Երրորդ
Հայք և առնէ զնա եպարբի» Յովհ. կաթ.,
էջ 68: Այս բառերը փոխառված են հու-
նարենից համեմատաբար ուշ ժամանա-
կաշրջանում:
- 40) Երեսաւոր.— «Երեսաւորք ի սիրտ և ի
պաշտպանութիւն պատերազմի» Խոր.,
Ա 13, էջ 43. «և ի մարտս երեսաւոր»
Խոր., Ա 21, էջ 65. «զանձնագեղս և զե-
րեսաւորս» Յովհ. կաթ., էջ 119. «արս
երեսաւորս ի սիրտս և ի պատրաստու-
թիւն զինուց» Յովհ. կաթ., էջ 114. «երե-
սանայ» — Մինչ հանդէպ երեսանայ Ա-
ղեքսանդրու ի յանդուզն զիմացութիւն»
Արծր., Ա 6, էջ 79. համեմատե նաև
Պատմ. Աղեքս. և Վարք Ոսկ.: Ըստ երե-
վոյթիւն, հետին շրջանի բառեր են:
- 41) Եօթնպարիսպեան.— «Բայց Տրդա-
տայ իւր հաստատեալ զեօթնպարիսպ-
եանն Եկբատան» Խոր., Բ 87, էջ 236.
«Եւթն պարիսպքն՝ այնք որ յԵկբա-
տանան» Թէոն, էջ 22: Թեոնի հայերեն
թարգմանութեան հրատարակութեան ա-
ռաջաբանում ես արդեն ցույց եմ տվել,
որ Խորենացին օգտվել է 6-րդ դարի այս
թարգմանութիւնից. տե՛ս «Թէոփնեայ
Յաղագս ճարտասանական կրթութեանց»,
Երևան, 1938 թ., էջ 16—17:
- 42) Զրուցարան.— «Եւ մասն առ ի Յունաց
զրուցարանն» Խոր., Ա 2, էջ 9. «զրու-
ցարանութիւն» — «Եւ այս կարգ զրու-
ցարանութեան դադարումն առցէ ձեռք»,
Ա 9, էջ 32. համեմատե նաև Խոր., Ա 8,
էջ 28. «որպէս Յովսեփոս մեզ զրուցա-
բանէ» Արծր., Ա 6, էջ 89. «համարաւէր
ի լսելիս նորա զրուցարանութիւն հնոցն
թագաւորաց» Արծր., Դ 3, էջ 464:
- 43) Ընթերցասէր, ընթերցասիրութիւն, ըն-
թերցասիրեմ.— «Ով ուշիմ ընթերցա-
սէրդ» Խոր., Ա 5, էջ 17. «Յորժամ զայս-
պիսիս ընթերցասիրիցեմք իմաստու-
թեան ճառս» Խոր., Ա 3, էջ 10. «զոր ըն-
թերցասէրն Պտղոմէոս գրեալ» Արծր.,
Ա 6, էջ 84. «Ամենեղուն իսկ ընթերցա-
սիրաց յայտնի են» Արծր., Դ 6, էջ 474.
«ով ընթերցասէրդ» Յովհ. կաթ., էջ 12.
«որ էր այր ընթերցասէր և ուսումնասէր»
Յովհ. կաթ., էջ 88. «և ընթերցասէր աս-
տուածային գրոց» Սոկր. Սքուլ., Զ 3, էջ
494, Կարող են լինել ուշ շրջանի բառեր:
- 44) Կաճեայ.— «Ճախր ամուսնոյր կաճեայն»
Խոր., Գ 9, էջ 267. «վառեալ թաղի կա-
ճեայ» Մովս. Կաղան., Ա 12, էջ 38:
- 45) Թիկնապահ.— «Եւ թիկնապահս իւր,
զինու հանդերձ, ի դաւաւկացն Խորուայ
Հարկազնոյ» Խոր., Բ 7, էջ 110. «Ապա
զգեցուցանողս արքայի և թիկնապահս»
Յովհ. կաթ., էջ 26 (նաև էջ 312 և 342).
«Եւ Վահրամ Սեպուհ թիկնապահ իշխա-
նին» Արծր., Գ 2, էջ 218 (նաև Ա 5, էջ
79, Գ 2, էջ 224. Գ 29, էջ 426). Մովս.
Կաղան., Բ 11, էջ 156, Բ 13, էջ 167:

* Շարունակված ամսագրի 1955 թվականի № V-ից:

Ուշագրավ է, որ Խորենացին, Հովհաննես կաթողիկոսը և Թովմա Արծրունին գործ են անում հաճախ կենցաղային-նազմական նման բառեր, որոնք չեն հանդիպում մատենագրական հնագույն երկերում. օրինակ՝ աշտանակիլ, դիպաղեղն, երեսաւոր, պահպանակ, տիգաւոր, կիսախողխող, բազմախողխող և այլն:

46) Թիկնաւէտ.— «Երուանդեանն Տիրարն, երեսօք գունեան և մեղուակն, անձնեայն և թիկնաւէտն» Խոր., Ա 24, էջ 73. «Այնպէս ապա գունեան այրն և թիկնաւէտ առ ամիրայն մտանէր» Յովհ. կաթ., էջ 102. «որ էր այր քաջանձնեայ և թիկնաւէտ» Յովհ. կաթ., էջ 135. «Քաջահասակ էր նա և անձնեայ և թիկնաւէտ» Յովհ. կաթ., էջ 137:

47) Ինքնահաճոյ.— «Այլ և ինքնահաճոյ արդարեւ գործա» Խոր., Ա 4, էջ 15. ունեն նաև Յովհ. կաթ., էջ 12, Պատմ. Աղեքս., էջ 51, 74, Թէոդ. խչ. և այլն:

48) Իրական.— «Որպէս յիրականացն պատմութեանց Հերոդոտեայ է ուսանել ի շորրորդէն» Խոր., Բ 2, էջ 104. «Եւ յիրականացն պատմութեանց են ինչ, զորս և ի Հերոդոտայ առնուլ, որպէս զայն որ ի շորրորդէն: Խորենացին, ինչպես տեսնում ենք, օգտւիլ է պարզապես Թեոնի հայերեն թարգմանությունից:

49) Լայնատարած.— «Ի լուղ ընդ լայնատարած և խորայատակն անցանէր ընդ նիրատ» Խոր., Բ 79, էջ 219. «Դաշտ յոյժ մեծանիստ, լայնատարած» Արծր., Ա 8, էջ 60. «Նշանս բարձրագոյնս լայնատարածս կանգնեցին» Արծր., Գ 10, էջ 180. համեմատե նաև Մովս. Կաղան., Բ 27, էջ 221. Բ 34, էջ 225. Համամ. Մեկն. քերակ. (հրատ. Աղոնցի, 1915 թ.), էջ 264. «տարած» հետադիրով կազմված բարդությունները սովորական են, գլխավորապես, Բագրատունյաց շրջանի մատենագրական երկերում. տե՛ս օրինակ «համատարած» Յովհ. կաթ., էջ 18. «պայծառտարած» Յովհ. կաթ., էջ 61. «բազկատարած» Մովս. Կաղան., Բ 29, էջ 232 և այլն:

50) Լծադիր.— «Լծադիրս և հարկապահանջս կացոյց բազմաց» Խոր., Ա 24, էջ 72. «Ամենեցունց նոցա լծադիր և հարկապահանջ ինէր» Յովհ. կաթ., էջ 22:

51) Լորդու.— «Պաշտօն տանել լորտուաց և աթերաց առնել բաշխումն» Խոր., Գ 62, էջ 345. «Եւ պաշտօն կրել լորտուացն, որ խնամ տանին տանն, և բաշխումն առնել

աթերացն» Պատմ. Աղեքս., էջ 41: Խորենացու Պատմության մեջ, ինչպես հայտնի է, քաղվածորեն գործ են անված հաճախ քաղվածքով բառեր Աղեքսանդրի վարքի հայերեն թարգմանությունից, որը անտարակույս, մատենագրական հետին շրջանի երկ է: Այդպիսի բառեր են, օրինակ՝ «Տոմիշխան» Խոր., Գ 66, էջ 353. Պատմ. Աղեքս., էջ 19. «Խնդամիտ» Խոր., Գ 68, էջ 361. «Երեսամարտիկ» Խոր., Գ 40, էջ 308, Պատմ. Աղեքս., էջ 24. «Ճիավարիլ» Խոր., Գ 13, էջ 271, Պատմ. Աղեքս., էջ 25. «Ճիարձակարան» Խոր., Գ 55, էջ 331. Պատմ. Աղեքս., էջ 26. «տուբի» Խոր., Գ 62, էջ 345. Պատմ. Աղեքս., էջ 41, 186. «Վիշապազն» Խոր., Ա 30, էջ 84. Պատմ. Աղեքս., էջ 41. «Երեսարարձ» Խոր., Գ 62, էջ 345. Պատմ. Աղեքս., էջ 41. «Տինգակատար» Խոր., Գ 62, էջ 345. Պատմ. Աղեքս., էջ 41. «Տանգոյց ի հանգուցէ» Խոր., Բ 46, էջ 172. Պատմ. Աղեքս., էջ 58. «Նգախարխար» Խոր., Գ 28, էջ 280. Պատմ. Աղեքս., էջ 64. «Թուլամտութիւն» Խոր., Ա 21. Պատմ. Աղեքս., էջ 96. «Մեծաւոր» Խոր., Ա 10, էջ 33. Պատմ. Աղեքս., էջ 97. «առնապատկեր» Խոր., Բ 12, էջ 122. Պատմ. Աղեքս., էջ 149. «Լիմուտ» Խոր., Գ 55, էջ 330. Պատմ. Աղեքս., էջ 154 և այլն և այլն:

52) Խան.— «Ելանէ ի խանս կարգեալս ի բանակէն իւրմէ ի քաղաքն իւր. «Խոր., Բ 46, էջ 172: Ըստ երևութիւն, ռամկական ուշ շրջանի բառ է:

53) Խաքան.— Տե՛ս Խոր., Բ 87, էջ 235. Բ 89, էջ 239. Սեբ. գլ. Ը, էջ 33, ԻԶ, էջ 67, ԻԷ, էջ 68 և 69. Ղևոնդ, ԺԲ, էջ 41. ԺԸ, էջ 101. Խոր., Աշխ., էջ 605. Սուրբ. հրտ. էջ 27:

54) Խորտարբոտ.— «Արշաւել ընդ խորտարբոտս և ընդ վիմուտ տեղիս» Խոր., Գ 55, էջ 330: Ըստ երևութիւն, ուշ շրջանի բառ է:

55) Խրթնանամ.— «Եկեղեցի Հայաստանեայց՝ խրթնացեալ է ի բարեգարդութենէ բեմիւն» Խոր., Գ 68, էջ 358. «Զի սուրբ եկեղեցին խրթնացեալ ի բարեգարդութենէ բեմիւն» Ղևոնդ, Ի, էջ 21. ունի նաև Յովհ. կաթ., էջ 58, 110, 116. տե՛ս նաև Խոր., Շնորհ., նար. «Խրթնի» — Այնքան խրթնի անծանօթքն պատահեն առ միմեանս, միմչև թարգմանաց անգամ կարօտանան» Արծր., Բ 7, էջ 121: «Խրթնի» «թիւն» իմաստով ունի Փիլիւն., Ա 7. համեմատե նաև Յովհ. կաթ.,

- էջ 74, 80: «Խրթնագրեստ» Թէոդոր. Մայրագոմ., էջ 147. «Խրթնութիւն» Ստեփ. Սիւն. Մեկն. քեր., էջ 207 (հրատ. Ադոնցի, 1915 թ.):
- 56) Կայկայիմ.— «Կայկայեցաւ տգիտութեամբ շարափառութիւն» Խոր., Գ 68, էջ 358. «Կայկայէին որդիք աղախնեաց» Արծր., Դ 5, էջ 473. գործ է ածված Խորենացու և Արծրունու մոտ:
- 57) Կապան.— «Անցանէ ընդ Կապանն ճորայ» Խոր., Բ 65, էջ 200. «Ելին արտաքսքան զԿապանն ճորայ» Խոր., Գ 12, էջ 270. «Զոգան հասին ի Կապանս ճորայ» Սեբ. Խժ, էջ 151. «Զի է Կապանք երկաթի և բանտից և Կապանք բարեւայ (այսինքն լեբանց), որ ասի՝ կիրճս ճանապարհի» Նրզն. քեր. «Անցանէին ընդ Ենդ և ընդ դժուար Կապանսն լեբանց» Ուռհ.: «Կապանք» հատուկ այս իմաստով, ըստ երևույթին, հետին շրջանի բառ է:
- 58) Կիսակտուր.— «Արարեալ ստեղծու է կիսակտուր զգլուխ նորս» Խոր., Գ 39, էջ 307. «Գթա ով թագաւոր, ի կիսակտուր շինականս» Սահմ., Բ, էջ 166. «Ոչ թողլով կիսակտուր զբանիցն ոճ» Յովհ. կաթ., էջ 228. «Զիա՛րդ եթէ Աստուած կիսակտուրն և ի կաղէն գողացեալն» Արծր., Ա 3, էջ 64:
- 59) Կղիմայ.— «Վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք զկղիմայն զայն Պոտոն Արմենիան» Խոր., Ա 14, էջ 46. «Եւ զի զկղիմայն զայն» Յովհ. կաթ., էջ 18. նաև Վարդ. վրդ., Ոսկեփ. և այլն:
- 60) Կողմնակալ.— «Եւ վերակացուաց աշխարհիս ի նոցանէ կացելոց և մեծաց կողմնակալաց» Խոր., Ա 21, էջ 66. Բ 7, էջ 109, Բ 8, էջ 113. տե՛ս նաև Յովհ. կաթ., էջ 26. Արծր., Բ 5, էջ 184, Բ 6, էջ 197, Գ 1, էջ 209, Դ 2, էջ 223. Մովս. Կաղան., Ա 4, էջ 14. «Կողմնակալութիւն» — Խոր., Բ 8, էջ 113, Բ 11, էջ 121: Այս բառերը շին հանդիպում հնագույն երկերում:
- 61) Կոպտարանձն.— «Զայս խոժոռագեղ և բարձր և կոպտարանձն և տափակաքիթ, խորակն և սթնահայեաց» Խոր., Բ 8, էջ 114. «Կոպտաձև» Վարդ. պատմ.: Ըստ Աճառյանի (Արմատ. բառ.)՝ «կոպիտ» արմատը, որ այս բարդությունների առաջադիրն է, գործ է ածվել միջին հայերենում:
- 62) Հակառակաթոռ.— «Զի լիցի ընդդիմափառ մեծին Սահակայ և հակառակաթոռ Խոր., Գ 65, էջ 350. «Սակայն հակառակաթոռ գրով» Յովհ. կաթ., էջ 73. «Եւ կացուցին հակառակաթոռ սրբոյն Սահակայ զՍորմակ մոլի» Արծր., Ա 129: «Հակառակաթոռ» բառը, որքան ինձ հայտնի է, չի հանդիպում հնագույն երկերում:
- 63) Հարսնանամ.— «Զի հարսնացի արքայի» Խոր. Բ 83, էջ 226. տե՛ս նաև Պատմ. Հոփ., էջ 298, 307 (Վենետիկ, 1843 թ.). Զաքր. կաթ., Վրդ. ծն., Լամբր. և այլն: Կարող է լինել հետին շրջանի բառ:
- 64) Հաւանողական.— «Իսկ նուաճել հաւանողական կամ բռնաւորական բանիւ» Խոր., Բ 92, էջ 245. «Զոմանս հաւանողականաւ, իսկ զոմանս բռնաւորականաւ կարգաւ» Յովհ. կաթ., էջ 41. նաև Նար., ԺԷ:
- 65) Հաւասարասէր.— «Արդարադատ և հաւասարասէր վշիռս ունելով յամենայնի» Խոր., Ա 24, էջ 73. «Այլ և ի հաւասարասիրութիւն առ ամենեսեան զինքն վշտադատեալ» Յովհ. կաթ., էջ 22:
- 66) Հեղձամահ լինել.— «Վասն որոյ հեղձամահ եղև յիւրոց սենեկապետաց» Խոր., Գ 22, էջ 283. «Եւ այնպէս հեղձամահ վճարէին ի կենաց» Ղևոնդ, Է, էջ 25. ունեն նաև Զաքր. կաթ., Մովս. Կաղան.: Տե՛ս Ակիմյան, Մատեն, հետադ., III, էջ 197:
- 67) Հնախօսութիւն.— «Ոչ հնախօսութիւնք եղեալ մերոյ աշխարհի» Խոր., Գ 1, էջ 257. «Եւ որ ինչ ի համբաւուց արանց իմաստնոց և հնախօս սիրաբանից» Խոր., Բ 75, էջ 214. «Թ հնախօս շարադրական մատեանս» Արծր., Ա 1, էջ 24:
- 68) Հրընկեց, հրընկեցութիւն.— «Ամպ հրընկեցք» Խոր., Գ 68, էջ 365. «Հրընկեց բարկութիւն». ունի Պատմ. Աղեքս.:
- 69) Հրէշ.— «Անբաւութիւն յամուրաց և հրէշից» Խոր., Բ 18, էջ 223. «Ունի և հրէշ և մուշկ և սիրամարգ շատ» Խոր., Աշխ. (Վենետիկ, 1843 թ.), էջ 616. «Եւ ունի հրէշ, և մուշկ, և սիրամարգ շատ» Խոր., Աշխ. (Հրատ. Սուբբ.), էջ 46: Այս բառը առաջին անգամ գործ է ածված Աշխարհացուցցի մեջ, որ ուշ շրջանի երկ է:
- 70) Ծախր առնում.— «Ծախր առնոյր կաճեայն» Խոր., Գ 9, էջ 267. «Ծախր առեալ ճահողաբար» Պետր. Սիւն., էջ 14 (Վաղարշապատ, 1902 թ.). «Ծախր առեալ

ճեմէր յասպարիսի անդ» Յովհ. կաթ., էջ 176. «Եթէ զինուր հարկանէին՝ ոչ գործէր, այլ ճախր անոցը» Մովս. Կաղան., Ա 12, էջ 38. «Ընդ հովիտս դաշտացն ճախր առեալ» Մովս. Կաղան., Բ 36, էջ 263. ունի նաև Պատմ. Աղեքս., էջ 134. «Ճախրեալ» Արծր., Գ 29, էջ 412. «Ճախրաւացք» Մովս. Կաղան., Բ 28, էջ 229: «Ճախր առնում» բառը սովորական է ուշ շրջանի երկերում:

71) Մարդադաւ, մարդադաւութիւն.— «Իսկ միան գիշերային և մարդադաւաց» Խոր., Բ 39, էջ 165. «Եւ զմարդադաւութիւն ի բաց քեցել յինքեանց» Խոր., Բ 6, էջ 109. «Ի բաց քեցել յանձանց զաւազակութիւնն և զմարդադաւութիւն» Յովհ. կաթ., էջ 25. «Ի բաց ի նոցանէ հերքելով զաւազակութիւն մարդադաւութեան» Յովհ. կաթ., էջ 140. «Պատուր առնէր՝ զաւազակութիւն և զմարդադաւութիւն թողուլ» Մովս. Կաղան., Ա 4, էջ 14. «Երարձ նա յաշխարհէն իւրմէ զաւազակութիւն» Ասող., Գ 17, էջ 196: «Մարդադաւութիւն» բառը հանդիպում է միայն ուշ շրջանի երկերում:

72) Մեծահասակ.— «Ձանասնոց պաճարս բազմացուցանեն, մեծահասակս, քաջամարմինս» Խոր., Բ 59, էջ 338. «ուժեղ և մեծահասակ լինի, և հնազանդ և գործունեալ» Շիր. Տիկղ., էջ 20 (Երևան, 1940 թ.). «Եւ էր նա մեծահասակ և վախելու էրեսօք» Մեսր. երէց, էջ 19:

73) Մեծիմաստ.— «Մեծիմաստ և պերճաբան» Խոր., Ա 24, էջ 73. «Մեծիմաստ և պարկեշտ և մեծաջան» Յովհ. կաթ., էջ 137 և 292. «կարգեալ էր և գորագլուխ մի մեծիմաստ և յառաջատես» Արծր., Դ 3, էջ 460: «Մեծիմաստ» բառը հանդիպում է ուշ շրջանի երկերում:

74) Միջակտուր.— «Միջակտուր յայնպիսի ահաւոր բազկէ լեալ» Խոր., Բ 85, էջ 231. «Մրախողխող միջակտուր արարեալ» Արծր., Գ 25, էջ 387. «Ինքն լինի միջակտուր ի նմանէն» Մովս. Կաղան., Ա 12, էջ 87. ունեն նաև Մխ. առակը, Ասող. և այլն:

75) Միջերկրեայ.— «Եւ քեռայր իւր Միհրդատ հաւատացեալ զՄածաք և զհոգս Միջերկրեայցն» Խոր., Բ 14, էջ 127. տես նաև Խոր., Բ 25, էջ 142. Գ 5, էջ 261. 12, էջ 270 և 19, էջ 278. ունեն նաև Խոր. Աշխ., էջ 592, 600 և այլն և Սուքր. հրատ. էջ 6, 21 և այլն. «Աշխարհն Միախորհն, որ թարգմանի Միջերկրեայք» Ղևոնդ, ԺԹ,

էջ 103: «Միջերկրեայք» վերոհիշյալ իմաստով առաջին անգամ գործ է ածված Ղևոնդի Պատմութեան մեջ:

76) Մուկխինդ.— «Տան նմա արբուան, որպէս անդ ուրեմն ի հնունն Աթենացիքն Սոկրատայ զմուկխինդն» Խոր., Բ 92, էջ 247. «Յաղագս մուկխինդին Սովկրատայ» Նոննոս, III, ԺԳ, էջ 30. ունեն նաև Յովհ. կաթ., էջ 261. Նխա. կաղմ., Մեսր. երէց և ուրիշներ: Խորենացիին, հավանորեն, օգտվել է Նոննոսի հայերեն թարգմանությունից:

77) Մրրկալից.— «Ձմեռն սաստկաստոյց, մրրկալից, յերկարացեալ» Խոր., Գ 68, էջ 365. «Իրբև ձմեռն ընդմիջեցաւ և օղն խստացաւ թանձրացաւ միգախառն մրրկալից» Արծր., Բ 7, էջ 200. «Զկոհական մրրկալից դարձուցուցին» Արծր. Գ 5, էջ 247. «Ի բունութեմ մրրկալից հողմոյն» Արծր., Գ 7, էջ 269:

78) Յայտարարութիւն.— «Եւ անտի զյայտարարութիւն մերոյ ազգաբանութեանս խոստացաք» Խոր., Ա 2, էջ 7, «Յայտարարութիւն սակաւուք» Խոր., Ա 7, էջ 27. ունեն նաև Յովհ. կաթ., էջ 10, 12. Արծր., Ա 10, էջ 106, Ա 11, էջ 134, Դ 7, էջ 293. Մովս. քերթողահայր, տե՛ս Գիրք թղթ., էջ 22 և Յովհ. եպիսկոպոսապետ, տե՛ս Գիրք թղթ., էջ 32: Այս բառը սովորական էր ուշ շրջանի երկերում:

79) Յաջողածեան, յաջողածեանութիւն.— «Նորասթիւ և հարուստք յոյժ և յաջողածեանութիւն իսկ» Խոր., Ա 13, էջ 43. «Եւ ի սուսեր աջողածեանագոյն» Խոր., Ա 21, էջ 65. «աջողածեանութեամբ» Յովհ. կաթ., էջ 137. «աջողածեան» Յովհ. կաթ., էջ 336. «աջողածեանաբար» Յովհ. կաթ., էջ 114. «աջողածեանական» Յովհ. կաթ., էջ 120:

80) Նաւակամորջ.— «Եւ զօրացն Պարսից կողմնապահաց հատեալ զշուանս նաւակամորջին սիրատու» Խոր., Գ 13, էջ 271. «Ինդրէր զինքն վարդել պահապան նաւակամորջացն» Ղևոնդ, Դ, էջ 13. «Հատեալ զյարս նաւակամորջացն» Մեր., ԼԷ, էջ 95. «Նաւակամորջ» բառը, որքան ինձ հայտնի է, առաջին անգամ հիշատակված է Սերեոսի պատմութեան մեջ:

81) Շղոմարար.— «Ձայր շոյտ և շղոմարար և սուտակասպաս» Խոր., Բ 60, էջ 190. «Հրապուրեցայ ի շղոմարար շոգմոգեալ բանից մերոց թագաւորացն» Յովհ. կաթ., էջ 288. «Շղոմարար հպատակութեամբ վարէր առ թագաւորն» Արծր., Ա 8, էջ 101. «Մեռանի անձամբ ընդ այլ շղոմարար»

բարեն» Արծր., Ա 8, էջ 102, «Ոչ կարեմք փոյթ ընդ փոյթ շղոմարար հաճութեամբ թագաւորիդ յանձն առնուլ» Արծր., Բ. 2, էջ 143. «շոգմոզէր, շղոմութեամբ» Յովհ. կաթ., էջ 252: «Շողոմ» արմատը ունեն Ոսկ. Հոռովմ., 415 և Նոննոս, 45, սակայն «շղոմարար» բառը, որ չի հանդիպում հնագույն երկերում, սովորական ու ընդհանուր տարածված բառ է եղել, հավանորեն, Բագրատունյաց շրջանում:

82) Ուղղախօսեմ.— «Անուանէին հինք աշխարհին՝ «Մածաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել» Խոր., Ա 14, էջ 46—47. «Ձայս ոչ կարելով ուղղախօսել Յունաց և Ասորոց՝ կոչեցին Աբգարոս» Խոր., Բ 26, էջ 143. «Երկարակեցութեամբ դիմեանս աւանդութեամբ ուսուցանէին ուղղախօսել» Ստ. քեր., էջ 183 (հրատ Ադոնցի). «Ըստ մերոմս լեզուի ոչ բաւեալ ուղղախօսել» Յովհ. կաթ., էջ 32. ունի նաև Մագ. թղթ. (1910 թ.), էջ 131. «ուղղախօսութիւն», Ստ. քեր., էջ 183. Մագ.:

83) Չափաբերապէս.— «Կերահայեցողը չափաբերապէս մակագրութեանց» Խոր., Գ 62, էջ 343. «Ձառ ի ծերունեացն անցեալ բան ի պարզագոմիցն չափաբերապէս հանդիպեցայց» Յովհ. կաթ., էջ 131. «չափաբերութիւն», «չափաբերեալ» — «Ի չափաբերութիւն անհատից մարտկալին սեռից» Արծր., առաջաբան, էջ 18. «Տարածամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի» Արծր., Գ 29, էջ 400: Մատենաշված այս բառերը չեն հանդիպում հայ մատենագրութեան հնագույն երկերում:

84) Պահպանակ.— «Եւ պահպանակս բարձից և բազկաց» Խոր., Ա 11, էջ 36. տե՛ս նաև Խոր., Ա 24, էջ 72. Բ. 85, էջ 230. Գ 37, էջ 303. «Լեգէօն պահպանակ թիկնոցաց» Յովհ. կաթ., էջ 26. «Ի պահպանակացն բարձիցն և բազկացն» Յովհ. կաթ., էջ 312:

85) Պատեի.— «Պշրանօք և պոստելով կեայր զօրհանապազ» Խոր., Բ 63, էջ 194. «Կայր զյօնան պոզտեայր» Արծր., Գ 6, էջ 254. Գ 15, էջ 340. ունեն նաև Վրդ. սղմ., Կիր. պատմ.: Հնագույն երկերում չի հանդիպում:

86) Ջալոտ.— «Հրամայեաց ջալոտիք հարկանել յերկար» Խոր., Գ 14, էջ 272. «Հարեալ ջալոտիք զթիկունս նորա՝ սաստկագոյնս տանջէին» Ղևոնդ, Խ, էջ 164. ունեն նաև Սիսիան. Սոփիերք ԺԲ, էջ 33. Յայմ. և այլն: Առաջին անգամ հիշատակված է Ղևոնդի Պատմութեան մեջ:

87) Ջախումն.— «Եւ այսպիսի ջախումնով լախճանեցաւ» Խոր., Բ 46, էջ 173. «ջախել» կամ «ջաղխել» — «Որք միանգամ ելին ընդդէմ նոցա պատերազմել՝ ջախեցին մանր իբրև զփոշի» Ղևոնդ, Լ է, էջ 156. «Եղարկ զթագն Աղեքսանդրի և ջախեաց զսաղաւարտ նորա» Պատմ. Աղեքս., էջ 91. «Եւ բոլոր անգամք նորա ջախեալ ջախջախեալ» Յովհ. կաթ., էջ 117. «Մեծամեծս փքայր ջնջել ջարդել ջաղխել» Յովհ. կաթ., էջ 239: Հնագույն երկերն ունեն կրկնութեամբ «ջախջախել»:

88) Սաղապեցուցանել.— «Ի դէն մազդեզանց սաղապեցուցանել» Խոր., Գ 55, էջ 330. «Եւ այնպիսեաւ սաղապաճեմի մտաք յնգիպտոս» Խոր., Գ, էջ 344. «սաղապել» Պիտ. վերջաբ., էջ 581. «սաղապ» — «Ձսաղապ և զննտի միտս նորա յինքն յանկուցեալ» Յովհ. կաթ., էջ 121. տե՛ս նաև Յովհ. կաթ., էջ 180, 216. Ոսկ. Յովհ. Բ լիշ., էջ 960. «անսաղապ» Յովհ. կաթ., էջ 291: Թեև «սոսաղապել» ունի մեկ անգամ նաև Տիմ., էջ 108 (տե՛ս Աճառյան, Արմատ. բառ.), սակայն «սաղապ» և «սաղապել» սովորական ու ընդհանուր գործածական բառեր էին, հավանորեն, Բագրատունյաց շրջանում:

89) Սաստկասառոյց.— «Ձեռն սաստկասառոյց մրրկալից» Խոր., Գ 68, էջ 365. «Ձարշարէին զնոսա ի գործս խիստ սաստկասառոյց ձմերանն դառնութեան» Արծր., Բ 6, էջ 200:

90) Սմբակակոխ անել.— «Սմբակակոխ արարեալ զսահմանս Հայոց» Խոր., Ա 13, էջ 44. «Եւ բազում արեան ճապաղիս ի նոցանէ հեղուին ամբակակոխ արարեալ» Յովհ. կաթ., էջ 114. «Բազմութիւնք սմբակակոխ ձիոցն» Մովս. Կաղան., Ա 21, էջ 81: «Սմբակակոխ» բառը ևս չի հանդիպում հնագույն երկերում:

91) Սրագլուխ.— «Ժուկ արդեամբ Թերսիտեայ նմանեալ կաղի և սրագլխոյ» Խոր., Գ 19, էջ 278. «Լեպեշտի էր [Թերսիտեա] և սրագլուխ և կաղ ի միոջէ ոտանէ» Թէոն, էջ 116. Նոննոս, IV, 20, 21, էջ 72 («Թերսիտէս, որ էր կաղ, և խեղ աշաբ, կորովի և լեպեշտի, լեղկ և սրագլուխ և յառաջախաւ»): Խորենացին օգտվել է Թեոնի կամ Նոննոսի հայերեն թարգմանութուններից:

92) Սրտեայ.— «Այր սրտեայ և ուժեղ» Խոր., Բ 63, էջ 194. «Միհրդատ, այր սրտեայ և աշողաձեռն» Ջուանշ., էջ 73. «Ջի էր այր սրտեայ և ուժեղ» Արծր., Բ 1, էջ 138:

93) Վերահասու.— «Նդև վերահասու» հոռ., Բ 78, էջ 217. «Վերահասու եղաք գրելոցս առ ի բէն» հոռ., Գ 57, էջ 335. «Որչափ մեք եղաք վերահասու» հոռ., Բ 36, էջ 161. «Վերահասուցեալ» — Սոկր. Սքոլ., Ա 8, էջ 23. ունեն նաև Զքր. կաթ., Սանահն. և այլն:

94) Վերահայեցող.— «Վերահայեցողը շափաբերապէս մակադրութեանց» հոռ., Գ 62, էջ 343. «վերհայիմ» — Զքր. կաթ. խշ. «վերահայեաց» Թէոդոր. Կոա. կմբ. պտրդ. «վերահայեցողութիւն» — Դիոն. երկն. և եկեղ. Շն., կամբ. և այլն:

95) Վերջոտնիլ.— «Ի նոյն բլուր ուստի էջն՝ վերջոտնեալ կլանէր» հոռ., Ա 11, էջ 36. «Որ ոչ վերջոտնեալ կալալ ամօթով ոչիտին տեղին» Արծր., Ա 11, էջ 134. «Բայց Աշոտ վերջոտնեալ հանդերձ Վահանաւ եկն եհաս խաղաղութեամբ» Արծր., Գ 16, էջ 343. «Վերջոտնեալ եկն բանակեցաւ յԱրտաշեսեան ավանին» Արծր., Գ 18, էջ 348. ունեն նաև Նանայ. Սկևռ. և այլն: «Վերջոտնիլ» կարող է լինել ուշ շրջանի բառ:

96) Վիթխարի.— «Յարթանդամք մարմնով և վիթխարիք» հոռ., Ա 9, էջ 31. «Վիթխարի հասակաւ և ուժով» հոռ., Բ 8, էջ 114. «Ընդ վիթխարի սկայիցն միակամեալ» Յովհ. կաթ., էջ 14. ունեն նաև Յովհ. Իմաստ. Պալ. և այլն: «Վիթխար» արմատը չի պատահում հնագույն երկերում:

97) Վսեմանալ.— «Զմիտան վսեմացեալս» հոռ., Գ 69, էջ 363. «վսեմակաւ» — Յովհ. կաթ., էջ 265. ունեն նաև Անան. եկ. և այլն. «վսեմապետ» — Արծր., Գ 29, էջ 399. «վսեմախոճութիւն» — Պատմ. Աղեքս., էջ 129. «վսամ» — Մովս. Կաղան., Ա 26, էջ 102. «վսեմարփի» — Թէոդ. խշ. «վսեմագոյն» — Գիրք թղթ., էջ 381: «Վսեմ» կամ «վսամ» արմատը, ինչպես և նրանից կազմված բարդությունները, համարվելու են, հավանորեն, հետին շրջանի բառեր. համեմատե Աճառյան, Արմատ. բառ.:

98) Տափակաքիթ.— «Կոստարանձն և տափակաքիթ (տափաքիթ)» հոռ., Բ 8, էջ 114. «տափաքիթը, լայներեսը» հոռ., Աշխ, էջ 615 (Վինետիկ, 1843 թ.) «Տափաքիթ», հավանորեն, ուշ շրջանի բառ է:

99) Տիզերակալ, տիեզերակալութիւն.— «Որպէս տիեզերակալին Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» հոռ., Բ 88, էջ 238, «Վկալութիւնք տիեզերակալութեան» Ար-

տաշխի» հոռ., Բ 13, էջ 123. «Աղեքսանդր. Փիլիպպեայ տիեզերակալեալ բազմաց» Յովհ. կաթ., էջ 23. «Ն վասն զի տիեզերակալութեամբ իմն ձեռներէց լինէր [Արշակ քաջ] Յովհ. կաթ., էջ 24. «Թագաւորեալ Աղեքսանդր Մակեդոնացի տիեզերակալութեամբ» Արծր., Ա 6, էջ 79. «Համօրէն տիեզերակալեաց ամս է» Արծր., Ա 6, էջ 80. ունեն նաև Վրբ., Ածաբ., կմբ. և այլն: Մատնանշված այս բառերը չեն հանդիպում հնագույն երկերում:

100) Քաջադի.— «Ընդ քաջագրոյ կոյս օրիորդիս Ալանաց» հոռ., Բ 50, էջ 178. «ախոյանարձակ քաջադի» Արծր., Գ 29, էջ 427. «Բարեխնամող քաջազնեայ, յաւտարարգաւաճ զօրաւոր ապուհի պատրիկ տէր Զիւանշիր» Մովս Կաղան., Բ 30, էջ 239:

101) Քարտուղար, քարտուղարութիւն.— ունեն հոռ., Բ 67, էջ 202, Բ 60, էջ 190. Գ 47, էջ 316. Գ 52, էջ 325. Յովհ. կաթ., էջ 53, 193, 203, 204. Պատմ. Հոլիս., էջ 297. Պատմ. Ներս., էջ 28, հոռ. և այլն: Ուշագրավ է, որ այս բառերը հները չեն գործածել:

102) Քուաւոր.— «Ն ի վերոատ պաղանձաւ քուաւոր» հոռ., Գ 45, էջ 314. «Հասեալ ի տեղի ապառաժ քուաւոր» Արծր., Ա 1, էջ 46:

103) Օթանոց.— «Ո՞վ ոք տուն կամ օթանոց մեզ պատրաստեաց» հոռ., Բ 92, էջ 248. «Սկասն ամենեքին մտանել ի քուն յանձնիր օթանոցն» Արծր., Գ 20, էջ 361. ունի նաև Սոկր. «օթոց» — «Ներսն ինչէին չիւրաքանչիւր վրանաց օթոցի» Արծր., Գ 11, էջ 310. «Ի տեղող օթոցին» Արծր., Գ 16, էջ 341. «Օթարան» — հոռ., Բ 74, էջ 212. ունեն նաև Շոոր. Յս. Որդի և այլն: Հնագույն երկերում գործ է ածված «օթեան» բառը:

104) Օտարանոց.— «Մահմանէ և յամենայն զիւր վսնս շինել, զի յինիցին օտարանոցը» հոռ., Գ 20, էջ 280. «Կարգէ և վանորայս և օտարանոցս և հիւրանոցս և տնանկանոցս» Յովհ. կաթ., էջ 46. «Այլ հրամայեաց զվանորայսն քակիլ և զօտարանոցսն» Մեսր. երէց, էջ 116:

105) Շատխօսութիւն.— «Շատխօսութեան հոսանք» հոռ., Բ 92, էջ 249. ունի նաև Արծր., Գ 10, էջ 292:

Բացի վերև մեջ բերված բառերից, որոնց մեծագույն մասը համարվելու են մատենագրական ուշ շրջանի բառեր՝ կասկածելի են,

իմ կարծիքով, և կարոտ են հատուկ քննութիւն նաև մի սովոր մասը Խորենացու Պատմութեան մեջ գործածված հետևյալ բաների.

1. «արագարանութիւն» Ա 32, էջ 87:—
2. «արդարախօսող» Ա 6, էջ 23:—
3. «աւարտաբանութիւն» (վերնագիր), էջ 257:—
4. «բարձրահասակ» Ա 26, էջ 75:—
5. «բքարար», «բքարեր» Գ 68, էջ 365:—
6. «գթածութիւն» Գ 57, էջ 333:—
7. «դառնահոտ» Բ 39, էջ 165:—
8. «դեղակուր» Բ 87, էջ 235:—
9. «դժուարահաւք» Ա 5, էջ 17:—
10. «դիւանագիրք» Ա 3, էջ 10:—
11. «երգարան» Ա 3, էջ 11:—
12. «երկարողի» Գ 54, էջ 328:—
13. «երկայնանիւտ» Ա 10, էջ 33:—
14. «երթևեկութիւն» Ա 15, էջ 49:—
- 15 «էշ» (պատերազմական մեքենա) Գ 28, էջ 290:—
16. «ընդվզիլ» Գ 79, էջ 218 (նույն այս բառի հնագույն իմաստը տարբեր է):—
17. «թուլասրտութիւն» Գ 9, էջ 266:—
18. «պայքա» Բ 50, էջ 179:—
19. «լաւկամ» Գ 67, էջ 356:—
20. «կակունումն» Բ 83, էջ 227:—
21. «կծիք» Գ 68, էջ 364:—
22. «կծծի» Գ 68, էջ 364:—
23. «կողմնապետ» Ա 14, էջ 46. 17, էջ 55:—
24. «համաթիւ» Բ 82, էջ 225:—
25. «համբերողական» Գ 67, էջ 357:—
26. «համբաւատենշ» Գ 62, էջ 344:—
27. «հայրենասէր» Ա 13, էջ 43:—
28. «հար-

- կապահանջ» Ա 24, էջ 72:—
29. «հարկեցուցանեմ» Գ 65, էջ 353:—
- 30 «հարստի» Բ 37, էջ 162:—
31. «հնարաւորութիւն» Ա 27, էջ 78:—
32. «հնգապատիկ» Բ 88, էջ 238:—
33. «ձիւնակիր» Բ 7, էջ 111:—
34. «ձեռնտուութիւն» Բ 7, էջ 110:—
35. «մետաքսագործ» Բ 33, էջ 152:—
36. «նախագլուխ» Բ 19, էջ 278:—
37. «նորատի» Ա 13, էջ 43:—
38. «շամփրեմ» Ա 30, էջ 82:—
39. «շատակեր» Ա 12, էջ 39:—
40. «շատահանձար» Ա 20, էջ 63:—
41. «ոստիլմ» Բ 37, էջ 304:—
42. «ուսումնատեաց» Բ 92, էջ 248:—
43. «շարաբանեմ» Գ 64, էջ 348:—
44. «սլոտտիմ» Բ 37, էջ 304:—
45. «սլասրութիւն» Գ 68, էջ 363:—
46. «սլատառարդ» Բ 47, էջ 174:—
47. «սլետանամ» Գ 36, էջ 302:—
48. «ջերմահոտ» (ջերմահովտ?) Բ 6, էջ 108:—
49. «ջրաւոր» Բ 7, էջ 264 (հնագույն իմաստը տարբեր է):—
50. «սևազգեստ» Բ 60, էջ 191:—
51. «սիւզնն» Բ 83, էջ 226:—
52. «սպուրէք» Գ 49, էջ 320:—
53. «ստրատիկատ» Գ 36, էջ 302. 48, էջ 317. 57, էջ 335. 58, էջ 337 և այլն:—
54. «սերտիմ» Բ 91, էջ 244:—
55. «սլատթարազգի» Բ 63, էջ 195:—
56. «տարգալ» Բ 47, էջ 174:—
57. «տմարդի» Գ 68, էջ 364:—
58. «փառամոլ» «փառամոլութիւն» Գ 63, էջ 347. Բ 92, էջ 248:—
59. «քարազագաթն» Բ 4, էջ 106:—
60. «քարակտուր» Բ 39, էջ 165:

